



Լուսադիողային լամպերին ներկայացվող տեխնիկական պահանջներ

1. Էներգաարդյունավետության դաս $\geq A$
2. Աշխատանքային լարման տիրույթ 170-240Վ
3. Հաճախություն 50Հց
4. Լուսաարգասիք (Luminous Efficacy) 90-120Լմ/Վտ
5. Գունափոխանցման գործակից $Ra \geq 75$
6. Աշխատանքային ջերմաստիճանի տիրույթ -25--- +40°C
7. Շահագործման ժամկետը ≥ 30000 ժ
8. Գունային ջերմաստիճան 2500-3200K
9. Պոլսացիա-թրթռում $\leq 5\%$
10. Կոթառի տեսակը E27 /E14
11. E27 կոթառով լամպ մինչև 14Վտ հզորությամբ և վերը նշված Լմ/Վտ տիրույթի հարաբերությամբ - 100Վտ շիկացման լամպին լիարժեք փոխարինող
12. E14 կոթառով լամպ մինչև 8Վտ հզորությամբ և վերը նշված Լմ/Վտ տիրույթի հարաբերությամբ - 60Վտ շիկացման լամպին լիարժեք փոխարինող
13. Հզորության գործակից ≥ 0.5
14. Լուսատվության նվազում երաշխիքային ժամանակահատվածում չպետք է նվազի ավելի քան 25% (տեղադրումից որոշակի ժամանակահատված հետո ստուգվելու է ըստ շահառուների բողոքների)
15. Երաշխիք նվազագույնը 3 տարի՝ երաշխիքի կատարումը պետք է ապահովվի շահառու համայնքի կամ հարևանությամբ գործող վաճառակետում վնասված լամպերի փոխարինման հնարավորությամբ
16. Տեխնիկական պահանջները սահմանվելիս՝
 - որևէ կոնկրետ ապրանքանիշ չի դիտարկվել,
 - հիմք են ծառայել ԵՄ դիբեկտիվները, Illuminating Engineering Society ամերիկյան ընկերության նյութերը,
 - չափորոշիչների համար ընտրվել են ոչ թե լավագույն, այլ նվազագույն ընդունելի արժեքներ:
17. Բոլոր այն ապրանքատեսակները, որոնք կբավարարեն սույն պահանջներին և որոնց գնային տատանումը նվազագույնի նկատմամբ չի գերազանցի 10%/Լմ/վտ շեմը, կներառվեն գնումների գոծընթացում, ընդ որում տարբեր ապրանքանիշների չափաբաժինը կլինի հավասարաչափ:
18. Ներկայացված պահանջներին համապատասխանող ապրանքատեսականու փաստացի բացակայության դեպքում մատակարարը պետք է ներկայացնի նաև դրանց մատակարարման ժամկետը: